«ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՔՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ» ԱՄԲԻՈՆԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԸՍՏ ԱՄԲԻՈՆԻ 2020-2025 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ

Համառոտ տեղեկատվություն ամբիոնի վերաբերյալ

Դասընթացներ

«Ստոմատոլոգիայի» ամբիոնը գործում է «Ստոմատոլոգիական» ֆակուլտետի կազմում :

Ամբիոնն իրականացնում է հետևյալ մասնագիտական առարկաների դասավանդումը՝ «Նյութագիտություն», «Թերապևտիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա», «Ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելում», «Օրթոպեդիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա», «Վիրաբուժական ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա», «Թերապևտիկ ստոմատոլոգիա /կարիեսոլոգիա/», «Վիրաբուժական ստոմատոլոգիա /տեղային անզգայացում», «Վիրաբուժական ստոմատոլոգիա /բերանի խոռոչի վիրաբուժություն/», «Վիրաբուժական ստոմատոլոգիա /իմպլանտոլոգիա/», «Օրթոպեդիկ ստոմատոլոգիա /հասարակ հարադրավորում/», «Օրթոպեդիկ ստոմատոլոգիա /հարադրավորում լրիվ անատամության/», «Օրթոպեդիկ ստոմատոլոգիա /բարդ հարադրավորում/», «Թերապևտիկ ստոմատոլոգիա /էնդոդոնտիա/», «Թերապևտիկ ստոմատոլոգիա /պարադոնտոլոգիա/», «Թերապևտիկ ստոմատոլոգիա /բերանի խոռոչի լորձաթաղանթի հիվանդություններ/», «Դիմածնոտային վիրաբուժություն», «Մանկական թերապևտիկ ստոմատոլոգիա», «Մանկական վիրաբուժական ստոմատոլոգիա», «Օրթոդոնտիա և մանկական հարադրավորում», «Գենետիկորեն պայմանավորված հիվանդություններ»:

Ամբիոնում ներգրավված դասընթացները ուսուցանվում են միայն ստոմատոլոգիական ֆակուլտետում:

Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

Ամբիոնն ապահովված է համապատասխան մասնագետներով և 2021 -2022 ուստարում ունեցել է թվով 9 աշխատակից /1 բ. գ. թ./:

Պրոֆեսորադասախոսական կազմի միջին տարիքը՝ 41 տարեկան:

Նշեմ, որ 2020-2021 ուսումնական տարում ամբիոնը ունեցել է 9 դասախոս: Այսպիսով 2021-2022 ուստարում ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը համալրվել է նոր դասախոսներով՝ ուսանողների թվի ավելացման պատճառով:

2021-2022 ուստարում ամբիոնի աշխատանքների ուսումնական ծավալը 3600 կազմել է ժամ:

Դասախոսների կողմից ուսումնական ծանրաբեռնվածությունը կազմել է 3063 ժամ:

«Վիրաբուժական ստոմատոլոգիա» առարկան դասավանդող դասախոս Գայանե Ղամբարյանը ազատվել է աշխատանքից սեփական դիմումի համաձայն: Նրան փոխարինել է դասախոս Էրիկ Սարգսյանը:

2021-2022 ուստարվա հունվար ամսից կազմվել է անցումային ուսումնական պլան՝ հաշվի առնելով ԱԲՀ-ի ընդհանուր պլանի փոփոխությունը, որից ելնելով կատարվել են նաև փոփոխություններ Ստոմատոլոգիական ֆակուլտետի ուսումնական պլանում՝ թե° կրեդիտային համակարգում, թե°՝ առարկաներին հատկացվող ժամաքանակում: Անցումային պլանի համար կազմվել է դասավանդող դասախոսների ծանրաբեռնվածությունը և դասընթացների ծավալը: Ըստ որի դասախոսների ծանրաբեռնվածությունը կազմել է 569 ժամ, իսկ դասընթացների ծավալը 805 ժամ:

2021-2022 ուստարվա ապրիլ ամսին՝ «Մայր Թերեզա» ԲՈՒՀ-ի փակվեկու պատճառով

ԱԲՀ–ն կազմակերպեց ուսանողների ընդունելություն վերը փակված ԲՈՒՀ-ից: Ուսումնական գործընթացը Ստոմատոլոգիական ֆակուլտետում կազմակերպելու նպատակով կազմվեց օպերատիվ ուսումնական պլան: Ըստ որի ընդունված ուսանողներին դասավանդող դասախոսների ծանրաբեռնվածությունը կազմել է 378 ժամ, իսկ ծավալը 420:

Ամբիոնի ուսումնագիտական ռեսուրսները

«Ստոմատոլոգիայի» ամբիոնի առարկաները դասավանդվում են ԱԲՀ-ի գլխավոր մասնաշենքի հատուկ կահավորված լսարաններում և ստոմատոլոգիական կլինիկաներում, որոնք ապահովված են ստոմատոլոգիական տարաբնույթ սարքավորումներով և գործիքներով, ինչը հնարավորություն է տալիս գործնականում ուսանողներին ուսուցանել և զարգացնել ձեռքի հմտություններ:

Ուսումնական և կլինիկական բազա

Ամբիոնում դասավանդվող դասընթացները անցկացվում են՝

- ԱԲՀ գլխավոր մասնաշենքի մասնագիտացված լսարան- կաբինետներում,
- Համալսարանի Գիտաբժշկական ուսումնական կենտրոնի ստոմատոլոգիական կաբինետներում և տեխնիկական աշխատանոցում,
- «Արմենիա» ԲԿ
- «My City Dentist» ստոմատոլոգիական կլինիկայում:

➢ Ուսուցման մեթոդները ամբիոնում՝
- Դասախոսություններ,
- Սեմինար, գործնական պարապմունքներ,
- Թեստային, գրավոր, բանավոր հարցումներ,
- Ինքնուրույն աշխատանքներ /ռեֆերատներ, թեմատիկ շնորհանդեսներ/:
- Ուսուցման ինտերակտիվ մեթոդներ /ցուցադրում, տեսացուցադրում, իրավիճակային խնդիրների լուծում, կլինիկական դեպքերի վերլուծություն, խմբային մեթոդ, խաղեր, հարց ու պատասխան և այլն/:

Այս ամենը կատարվել է նույն կերպ, միայն հեռավար հարթակում:

➢ Ամբիոնն առաջնորդվում է համալսարանում գործող «Ուսանողների գիտելիքների գնահատման համակարգով».
- միջանկյալ ստուգումներ,

- ստուգարքներ,
- քննություններ,
- ինքնուրույն աշխատանքներ /ռեֆերատներ, թեմատիկ շնորհանդեսներ/,
- հաճախումներ,
- սեմինար, գործնական պարամունքներին ուսանողների մասնակցությունը:

Հետազոտությունների հիմնական ուղղությունները և ձեռքբերումները

Հաշվետու ժամանակաշրջանում «Ստոմատոլոգիայի» ամբիոնը հնարավորություն չի ունեցել հետազոտություններ կատարել:

1. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Այս ուղղությամբ ամբիոնի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Գործողություն 1.1 Միջոցներ ձեռնարկել դասախոսական կազմի որակավորման բարձրացման ուղղությամբ

2021-2022 ուսումնական տարվա ընթացքում ՈԱ ԿԲ գծով պրոռեկտորի նախաձեռնությամբ կազմակերպվել է անգլերենի B2 մակարդակի երկշաբաթյա վերապատրաստման դասընթաց /Հիմք՝ ամբիոնի վերապատրաստմանը մասնակցաց դասախոսների գրանցաթերթիկ՝ /Ա. Զեյնալյան, Ա. Գևորգյան/:

Գործողություն 1.2. Ամբիոնի առարկայական դասընթացների թվայնացում

Հաշվետու ժամանակահատվածում 2021-2022 ուստարվա ընթացքում վերանայվել են «Ստոմատոլոգիայի» ամբիոնի առարկայական ծրագրերը և նկարագրերը, թվայնացվել դասավանդվող դասընթացների նյութերը՝ դասագրքեր, դասախոսություններ, տեսաներկայացումներ /Հիմք՝ ԱԲՀ-ի էլ. գրադարանում, «Ստոմատոլոգիայի» ամբիոնի էլեկտրոնային և թղթային տարբերակով առկա առարկայական ծրագրերը և նկարագրերը/:
Հաշվետու տարում ուսումնական գծով պրոռեկտորի հանձնարարությամբ անգլերեն լեզվով են թարգմանվել ամբիոնի առարկայական ծրագրերը՝ հաշվի առնելով ուսումնական ինստիտուցիոնալ գործընթացը:

Գործողություն 1.3. Առարկայական դասընթացների վերաբերյալ տեսանյութերի բազայի ստեղծում

Հաշվետու ժամանակահատվածում 2021-2022 ուստարվա ընթացքում վերանայվել են «Ստոմատոլոգիայի» ամբիոնի առարկայական ծրագրերը և նկարագրերը, թվայնացվել դասավանդվող դասընթացների նյութերը՝ դասագրքեր, դասախոսություններ, տեսաներկայացումներ /Հիմք՝ ԱԲՀ-ի էլ. գրադարանում, «Ստոմատոլոգիայի» ամբիոնի էլեկտրոնային և թղթային տարբերակով առկա առարկայական ծրագրերը և նկարագրերը/:

Գործողություն 1.4. Դասալսումների և դրանց քննարկումների բարելավում

2021-2022 ուստարում դասալսումները արձանագրվում են նոր ձևաչափով, որը հնարավորություն է տալիս առավել մանրակրկիտ անդրադառնալ դասընթացի թույլ և ուժեղ

կողմերին, առաջադիմությանը, դասի հետ կապված առաջարկություններ և դիտողություններ անել:

2021-2022 ուստարվա ընթացքում ամբիոնում դասավանդվող բոլոր դասընթացներից իրականացվել են 14 դասալսումներ: Առանձնացնելով դասապրոցեսում ծագող խնդիրներն ու թերությունները՝ «Ստոմատոլոգիայի» ամբիոնը պարբերաբար քննարկումներ է իրականացրել, որոնց ընթացքում յուրաքանչյուր դասախոս առաջարկել է իր մոտեցումները առկա խնդիրները լուծելու նպատակով: Կարևորելով նոր գիտելիքների ձեռքբերումն ու ամրապնդումը՝ պարբերաբար վերանայվել է դասավանդման մեթոդիկան, յուրաքանչյուր ուսանողի նկատմամբ ցուցաբերվել է անհատական մոտեցում՝ գիտելիքի յուրացման առանձնահատկություններից ելնելով /Հիմք՝ թիվ 4, 5, 9, 10 արձանագրություններ/:

Կատարված դասալսումների վերաբերյալ զեկույցը ներկայացվել է ՈԱ բաժին:

Գործողություն 1.5. Ամբիոնի կադրային ներուժի բարելավում

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է անգլերենի B2 մակարդակի վերապատրաստման երկշաբաթյա դասընթաց:

Գործողություն 1.7. Ամբիոնային աշխատանքների պլանավորում և համակարգում

«Ստոմատոլոգիայի» ամբիոնը 2021-2022 ուստարվա ընթացքում անընդհատ իրականացրել է աշխատանքների պլանավորում, համակարգել և կատարել 2021-2022 ուստարվա ծրագրով նախատեսվածը: Բացի տարվա պլանից կազմվել են յուրաքանչյուր առարկայի օրացուցային պլան, դասալսումների, հերթապահության, միջանկյալ ստուգարքների և քննությունների ժամանակացույց: Վերը նշված փաստաթղթերի շրջանակներում կատարվել է ամբիոնի աշխատանքների պլանավորում և համակարգում: 2021-2022 ուստարում պլանավորվել և կազմակերպվել են ամբիոնում դասավանդվող առարկաների միջանկյալ և ավարտական քննությունները՝ նախապես վերանայելով հարցաշարերը, թեսթերը և քննական տոմսերը /Հիմք՝ 2021-2022 ուստարվա ծրագիր, յուրաքանչյուր առարկայի օրացուցային պլան, դասալսումների, հերթապահության, միջանկյալ ստուգարքների և քննությունների ժամանակացույց/:

Գործողություն 1.9. Մասնակցություն ԱԲՀ-ի գիտական խորհրդի նիստերին

2021-2022 ուստարում «Ստոմատոլոգիայի» ամբիոնը մասնակցել է գիտական խորհրդի բոլոր 12 նիստերին: Հարցադրումներն ու քննարկումները տեղի էին ունենում յուրաքանչյուր նիստի օրակարգի շրջանակներում հիմք՝ նիստի արձանագրություններ:

Գործողություն 1.10. Փոխադարձ դասալսումների պլանավորում և անցկացում

2021-2022 ուստարում դասալսումները արձանագրվում են նոր ձևաչափով, որը հնարավորություն է տալիս առավել մանրակրկիտ անդրադառնալ դասընթացի թույլ և ուժեղ կողմերին, առաջադիմությանը, դասի հետ կապված առաջարկություններ և դիտողություններ անել:

Հիմք ընդունելով 2021-2022 ուստարվա դասալսումների ժամանակացույցը՝ իրականացվել են «Ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելում», «Օրթոդոնտիա», «Վիրաբուժական ստոմատոլոգիա», «Թերապևտիկ ստոմատոլոգիա», «Օրթոպեդիկ

ստոմատոլոգիա», «Թերապևտիկ ստոմատոլոգիա, պրոպեդևտիկա», «Վիրաբուժական ստոմատոլոգիա», «Մանկական վիրաբուժական ստոմատոլոգիա» առարկաներից /4, 5, 9, 10 արձանագրություններ/:

2. ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գործողություն 2.2. Խորհրդատվությունների տրամադրման աշխատանքներ

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի դասախոսները պարբերաբար իրականացրել են խորհրդատվություններ՝ յուրաքանչյուր դասախոսի հերթապահության գրաֆիկով սահմանված օրը: Խորհրդատվություններ կազմակերպվել են նաև միջանկյալ քննությունների հետ կապված հարցերի շուրջ, ինչպես նաև անհատական, ոչ ֆորմալ տարբերակով՝ ուսանողի ցանկությամբ /Հիմք՝ «Ստոմատոլոգիա» ամբիոնի յուրաքանչյուր առարկայի 2021-2022 ուստարվա Խորհրդատվությունների մատյան:

3. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գործողություն 3.4. Ընդլայնել ամբիոնի դասախոսական կազմի կողմից հրատարակվող գիտական հոդվածների քանակը:

Այս ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից գիտահետազոտական աշխատանքներ չեն իրականացվել:

4. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում այս ուղղությամբ ամբիոնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Գործողություն 4.1. Ուսանողների հետ հետադարձ կապի ապահովման բարելավում

«Ստոմատոլոգիայի» ամբիոնը միշտ կարևորել է ուսանողների հետ հետադարձ կապը, ինչը պահպանվել է ողջ 2021-2022 ուստարում: Դասախոսները պարբերաբար ուսանողների հետ քննարկել են դասերի ընթացքում ծագող խնդիրները, թերությունները՝ դրանք ժամանակին շտկելու և ուսումնական գործընթացը առավել արդյունավետ դարձնելու նպատակով: Ամբիոնի վարիչը պարբերաբար հանդիպումներ է իրականացրել ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի հետ՝ քննարկել վերոնշյալ խնդիրները: Յուրաքանչյուր դասախոս առանձնահատուկ ուշադրությամբ է մոտեցել ինքնուրույն աշխատանքների ստուգման և ուսանողի կողմից դրանց ներկայացման գործընթացին:

Գործողություն 4.2. Մասնակցություն ներհամալսարանական ՈԱ միջոցառումներին:

«Ստոմատոլոգիա» ամբիոնը 2021-2022 ուսումնական տարում մասնակցել է ԱԲՀ-ի ՈԱ միջոցառումներին և անգլերենի B2 մակարդակի երկշաբաթյա վերապատրաստման դասընթացին:

Ուսումնական գործընթացը բարելավելու նպատակով §Ստոմատոլոգիա¦ ամբիոնը առաջարկում է լսարանները ապահովել առավել հզոր համակարգիչներով, մասնագիտացված լսարանները՝ մասնագիտական ժամանակակից տեխնիկայով և գործիքներով: Բարեփոխման կարևոր բաղադրիչ է առավել ժամանակակից ստիմուլյացիոն սենյակի ստեղծումը:

«ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ» ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ բ.գ.թ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

Պաշտոնական փաստաթուղթը գտնվում է համալսարանում